ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018թ. հունվարի 11 **N 3-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13–Ի N 170-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի զինվորական կոմիսար, գնդապետ Մ.Ղազարյանի 2018 թվականի հունվարի 8-ի N 2/11 գրությունը՝ ***կարգադրում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի <<Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից 2018 թվականի առաջին զորակոչի 1990-1999թթ. ծնված քաղաքացիների բժշկական ստուգումը և զորակոչը անցկացնելու մասին>> N 170-Ա կարգադրությամբ հաստատված N 1 և N 3 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) <<Ս. Հովսեփյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ>> բառերը փոխարինել <<Հ. Ասատրյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար>> բառերով:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ